

# Կ Ա Ն Ա Դ Ա Յ Ի Հ Ա Յ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ը



Հայերը Կանադայում սկսել են բնակություն հաստատել XIX դ. 80-ական թթ.: Հայտնի է առաջին հայ ներգաղթողի անունը՝ Կարապետ Ներկարարյան, որը 1887-ին հաստատվել է Օնտարիո նահանգի Պորտ Հոպ գյուղաքաղաքում: 1890-ին Հյուսիսային Օնտարիոյի Տեմիսքամինգի շրջանում հանքային հետազոտություններ է ձեռնարկել Ա.Շահինը: 1892-ին Կանադա է գաղթել 37, իսկ 1895-ին՝ մոտ 100 հայ: 1896-ին Լեոն Պապայանը, այնուհետև Սոկրատ Յուրուճյանը Տորոնտոյում հիմնել են արևելյան գորգերի վաճառատներ (երկուսի շառավիղները շարունակվում են ցայսօր): Կանադայի Քվեբեք նահանգի առաջին հայ բնակիչներից է Ազիզ Սարաֆյանը, որն այստեղ հաստատվել է 1904-ին: Սկզբնական շրջանում Կանադա են եկել հիմնականում հայ տղամարդիկ, որոնց նպատակն էր դրամ վաստակելն ու հայրենիք վերադառնալը: Նրանք որպես բանվորներ աշխատել են Կանադան դեպի Խաղաղ օվկիանոսի ափ տանող երկաթուղու (Canadian Pacific) շինարարության վրա: Սակայն XIX դարի վերջին թուրքական բռնություններից հալածված հայ գաղթականները ընտանիքներով են ապաստան փնտրել Կանադայում:

Մինչև մեծ եղեռնը Կանադայում հայերի թիվը հասել է 1800-ի: Նրանք մեծ մասամբ Քղիից էին, Վանից, Մուշից, Խարբերդից,

Երզնկայից, գլխավորապես հաստատվել են Բրենտֆորդ, Համիլտոն, Մենտ Կաթրինգ, Պրեստոն արդյունաբերական կենտրոններում, որտեղ բանվորական ուժի կարիք կար:

Մեծ եղեռնին հաջորդած շրջանում սակավաթիվ վերապրողների է հաջողվել Կանադա գաղթել, քանի որ երկրի կառավարությունը հայերին դիտել է որպես ասիացիներ, որոնց մուտքը Կանադա տարբեր պատճառներով սահմանափակվել է: Բացառություն էր Կանադայի կառավարության հատուկ արտոնությամբ 1923-24-ին 8-12 տարեկան 100 հայ որբերի մուտքը Կանադա, որոնք բերվել էին Հունաստանի Կորֆու կղզու որբանոցից՝ մի խումբ կանադացի բարերարների կազմակերպած Կանադայի հայկական նպաստամատույց ընկերակցության (Armenian Relief Association of Canada) ջանքերով: Տղաները հաստատվել են Օնտարիո նահանգի Ջորջթաունի (այստեղից էլ՝ «Ջորջթաունի տղաներ» անվանումը) որբանոց-երկրագործական դպրոցում: Երեխաների հոգատարության եւ կրթության համար կազմվել է մասնավոր հանձնախումբ՝ Ա.Լ.Ալեքսանյանի գլխավորությամբ, որը ստանձնել է նաեւ հայոց լեզվի դասավանդումը: Ա.Ալեքսանյանի, Լ.Պապայանի եւ հանձնախմբի մյուս հայ անդամների եւ տղաների դաստիարակ Սրբուհի Պտուկյանի (Մայրիկի) ջանքերով երեխաներին տրվել է հայեցի դաստիարակություն. մինչեւ 18 տարեկան երեխաները սովորել են հայերեն եւ անգլերեն (1936-ին հայերեն եւ անգլերեն հրատարակել են «Արարատ» մեքենագիր ամսաթերթիկը): Այսօր Կանադայում կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք Ջորջթաունի տղաների շառավիղներն են: Ըստ կանադական ներգաղթի վիճակագրական տվյալների՝ 1900-ից մինչեւ 1930-ը Կանադա մուտք է գործել 3100 հայ, որոնց մոտ 75 տոկոսը հաստատվել է Օնտարիո, 20 տոկոսը՝ Քվեբեկ նահանգներում, մնացյալը սփռված էր զանազան քաղաքներում: Մինչեւ 1948-ը Կանադայի ներգաղթի օրենքներն արգելել են տարագիրների զանգվածային մուտքը: 1931-49-ին Կանադա է մուտք գործել ընդամենը 74 հայ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից (1939-45) հետո դրությունը փոխվել է: 1946-ին Կանադան անդամակցել է Տարագրյալների միջկառավարական հանձնաժողովին՝ հանձն առնելով ընդունել Եվրոպայի բազմաթիվ վտարանդիների: 1948-ին ստեղծվել է Կանադական հայկական կոնգրեսը (Canadian Armenian Congress), որի ջանքերի, ինչպես նաեւ Կանադայի ներգաղթի օրենքների մեղմացման շնորհիվ հազարավոր հայեր եկել են Կանադա: 1960-69-ին Ե. Բաստրմաճյանի եւ Գ. Պետուկյանի երաշխավորությամբ եւ

խնամակալությամբ մոտ 5 հազար հայ գաղթել է Կանադա եւ հաստատվել Մոնրեալում: 1970-ական թթ. հայերի թիվը Կանադայում հասել է 30 հազարի: Կանադայի հայերի թիվը ստվարացել է հիմնականում Միջին Արեւելքի երկրներից՝ Սիրիայից, Լիբանանից, նաեւ Եգիպտոսից, Թուրքիայից, Հունաստանից գաղթածների հաձվին: Զգալի թիվ են կազմել նաեւ այդ շրջանում Խորհրդային Հայաստանից գաղթած ընտանիքները: Համայնքը շոշափելի համալրում է ստացել նաեւ 1990-ական թթ., երբ տնտեսական դժվարությունների պատճառով Հայաստանից Կանադա են տեղափոխվել մի քանի հազար հայեր: Ներկայումս (2009) Կանադայում բնակվում է շուրջ 81,5 հազար հայ: Կենտրոնացված են Մոնրեալ եւ Տորոնտո քաղաքներում, բնակվում են նաեւ Վանկուվեր, Սենտ Կաթրինգ, Համիլտոն, Քվեբեկ, Օտտավա, Վինձոր եւ այլ քաղաքներում, Նովա Սկոշիա եւ Նյու Բրունսվիկ նահանգներում: Հիմնականում արհեստավորներ են, առեւտրականներ, աշխատում են նաեւ արդյունաբերության եւ գյուղատնտեսության մեջ: Զգալի թիվ են կազմում գիտնականները, ճարտարապետները, բժիշկները, արվեստի, գրականության եւ մամուլի բնագավառի աշխատողները: Կան նաեւ խոշոր ձեռնարկատերեր եւ վաճառականներ:

Կանադայի հայ գաղութը համախմբող եկեղեցական կառույցները սկսել են կազմավորվել 1940-50-ական թթ.: Առաջին հայկական եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, կառուցվել է 1930-ին, Սենտ Կաթրինգում: Ներկայումս հայ առաքելական եկեղեցիներ են գործում Մոնրեալում, Տորոնտոյում, Օտտավայում, Լավալում, Սենտ Կաթրինգում, Վանկուվերում, Միսիսոկոյում, Վինձորում, Համիլտոնում, Քեմբրիջում: Կանադայում կան նաեւ հայ կաթոլիկ եւ ավետարանական համայնքներ, որոնք ունեն իրենց եկեղեցիները եւ համապատասխան կրթական ու մշակութային կառույցներ:

Կանադայում պետական ծրագրով գործող հայկական ամենօրյա վարժարաններ սկսել են հաստատվել 1970-ական թթ.: Առաջին հայկական դպրոցը կազմակերպվել է Սենտ Կաթրինգում, 1919-ին: Առաջին ամենօրյա հայկական դպրոցը՝ Արմեն Քեպեք-Ալեք Մանուկյան վարժարանը, հիմնել է ՀԲԸՄ-ը 1970-ին, Մոնրեալում: Ներկայումս (2009) Կանադայում գործում են 6 ամենօրյա հայկական վարժարաններ:

Համայնքի ազգային կյանքը կազմակերպելու համար ստեղծվել են բազմաբնույթ կազմակերպություններ ու միություններ: Դեռեւս 1904-ին Բրենսֆորդում աշխատող հայերը, թեւս ապրում էին ծանր

պայմաններում, հիմնել են Քրիի Օսնակ գյուղի բարեսիրաց ընկերությունը՝ իր ծրագիր կանոնագրով, որի նպատակն էր ,ուսում եւ կրթություն տալ Օսնակ գյուղի երկսեռ մանուկներին: Ընկերությունը գոյատեւել է մինչեւ 1915-ը, երբ այդ գյուղի հայությունը բնաջնջվել է թուրքերի կողմից:

Հայ համայնքների կազմավերման առաջի օրերից հիմնվել են ազգային քաղաքական կուսակցությունների (ՄԴՀԿ, ՀՀԴ) զանազան ակումբներ եւ կոմիտեներ, բազմաթիվ հայրենակցական, բարեգործական, մշակութային, մարզական, երիտասարդական կազմակերպություններ՝ Պոլսահայ մշակութային միությունը, Հայաստանից արտագաղթածների Երեւան-Էրեբունի, պարսկահայերի “Բաֆֆի” մշակութային-հայրենակցական միությունները, Ջեյթունի հայրենակցական միությունը, Մոնրեալի եգիպտահայերի ընկերակցությունը, ՀԲԸՄ, ՀՕՄ, Նոր սերունդ, Թեքեյան, Համազգային մշակութային միությունների, ՀՄԸՄ-ի մասնաճյուղերը, Կանադայի հայ ուսանողների միությունը, ՀՀԴ-ի երիտասարդական միությունը, Հայ դատի հանձնախումբը, ,Հայաստանե համահայկական հիմնադրամի Կանադայի մասնաճյուղը, ,Արցախե հիմնադրամը, Կանադայի հայ առեւտրականների խորհուրդը, Մալխասյան հիմնարկությունը, Ջորջյան հիմնարկությունը եւն:

Կանադայի տարբեր քաղաքներում կազմակերպվել են թատերական-գեղարվեստական խմբեր՝ ,Արմենիան, ,Ժորժ Սարգիսյանե, ,Ալիշանե, ,Մնակյանե թատերախմբերը, ,Անիե, ,Էրեբունիե պարախմբերը, ,Գուսանե երգչախումբը եւն, լայն գործունեություն է ծավալել ,Կոմիտասե երաժշտական միությունը: Լույս են տեսնում ,Ապագա, ,Հորիզոն շաբաթաթերթերը, ,Բուրաստան, ,Գեղարդ, ,Փունջ, ,Լրաքաղ, ,Լուսաբաց, ,Լուսարձակ, ,Նոր Սերունդ պարբերականները:

Գործում են հայկական հեռուստատեսային եւ ռադիոժամեր՝ ,Թեքեյանի ձայնը (1978-ից), ,Հորիզոնը (1984-ից, հովանավորում է Համազգային մաշակութային միությունը) եւ ,Թելե Արմենիա անհատական ձեռնարկությունը (1977-ից): Կանադահայերն ակտիվորեն մասնակցում են երկրի տնտեսական, գիտական կյանքին: Մեծ վաստակ ունեն բժիշկ Ջոն Բասմաճյանը (Արքայական համալսարանի անատոմիական ֆակուլտետի ղեկավար), տնտեսագետ Ալբերտ Սաֆարյանը (եղել է Դիվի Ռիվերի քաղաքագլուխը), օրգանական քիմիայի պրոֆեսոր, գյուտարար

Ստեփան Հանեսյանը, ֆիզիկոս Արա Մուրադյանը (Կանադայի ատոմային կենտրոնի կիրառական հետազոտությունների ղեկավար), աստղաֆիզիկոս Արշավիր Գյունճյանը, Մոնրեալի գլխավոր հիվանդանոցի ճառագայթային բժշկության բաժնի վարիչ Հարություն Արզումանյանը, արդյունաբերող Զավեն Մեսրոպյանը (Համիլտոնի պողպատի ընկերության արտահանման ղեկավար), պատմաբան Գեորգ Բաղճյանը (վերջինիս նախաձեռնությամբ Մոնրեալի համալսարանում կազմակերպվել են հայագիտական դասընթացներ), դիվանագետ Հայկ Սարաֆյանը: Կանադայի խորհրդարանի անդամ է (նաեւ՝ Կանադա-Հայաստան բարեկամության խորհրդարանական խմբի ղեկավար) Սարգիս Ասատուրյանը: Երկրի մշակութային կյանքում զգալի ներդրում ունեն Կանադայի նկարիչների Արքայական միության անդամ Արման Թաթոսյանը եւ նկարչուհի Անահիտ Աբրահամյանը, աշխարհահռչակ լուսանկարիչներ Յուսուֆ Քարշը, Արթին Գվուքը, կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը, դաշնակահարներ Նորայր Արթինյանը եւ Գրիգոր Շահվերդյանը, դիրիժորներ Բաֆֆի Արմենյանը (1974-ից՝ Ստատֆորդի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար) եւ Նուրիան Արմանը, երգիչներ Դ. Վարժապետյանը (1974-ից՝ Տորոնտոյի օպերային թատրոնի մեներգիչ, Մնի երիտասարդական երգչախմբի հիմնադիր եւ խմբավար) եւ Արտո Մյուսենտիսյանը, Ժիրայր Գանթարճյանը (1970-ից՝ Տորոնտոյի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր), երգչուհի Սելմա Քեքիկյանը (1976-ից՝ Արմենիա թատերախմբի կազմակերպիչ եւ ղեկավար), կոմպոզիտորներ Պետրոս Շուժունյանը եւ Միհրան Էսեկյուլյանը: Կանադայի հայերը սերտ կապի մեջ են եղել հայրենիքի հետ եւ մեծապես օգնել նրան. դեռեւս Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-18) կամավորներ են ուղարկել ռազմաճակատ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-45) հանգանակություն կազմակերպել Մասունցի Դավիթե տանկային շարասյան ստեղծման համար: 1988-ի Սպիտակի երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու համար կանադահայերը մշակել են երկարաժամկետ ծրագրեր՝ ծնողազուրկ երեխաների խնամատարություն, պատանեկան ճամբարների կազմակերպում, բուժարանի, դպրոցների եւ սրբավայրերի նորոգում: Օտտավայում հայ համայնքը ձեւավորվել է 1970-ական թթ.: Ներկայումս (2009) այստեղ բնակվում է շուրջ հազար հայ: Գործում են Մուրբ Մեսրոպ եկեղեցին, որին կից՝ մեկօրյա հայկական դպրոց, ՀԲԸՄ Օտտավայի եւ ՀՕՄ-ի Մեւան մասնաճյուղերը, Հայ մշակութային միությունը: Մոնրեալում հայերը սկսել են հաստատվել XIX դ. վերջից: 1910-1913-ին այստեղ եկած 16 երիտասարդ հայերը

(հիմնականում՝ Բալուխ), համարվում են քաղաքի առաջին մնայուն հայ բնակիչները, որոնց շառավիղներն ապրում են ցայսօր: Համայնքը ձևավորվել է XX դարի կեսին: 1961-ին Սոնրեալում բնակվում էր 900, 1982-ին՝ 50 հազար հայ: Ներկայումս (2009) հայերի թիվը Սոնրեալում շուրջ 30 հազար է: Նրանք հիմնականում աշխատում են արդյունաբերության, առևտրի, կենցաղասպասարկման ոլորտում, զգալի թիվ են կազմում մտավորականները: Գործում են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սուրբ Հակոբ հայ առաքելական եկեղեցիները, հայ կաթոլիկ եւ ավետարանական եկեղեցիներ, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ: Համայնքում կա ամենօրյա երեք հայկական դպրոց:

Սոնրեալի հայերի ազգային կյանքը կազմակերպում են Կանադայի թեմի առաջնորդարանը, ՀՀԴ, Միհրան Փափազյանե կոմիտեն (1956-ից), ՀՀԴ երիտասարդական միության, Լեւոն Շանթե մասնաճյուղը, ՌԱԿ-ի, Էոժեն Փափազյանե ակումբը (1963-ից), Հնչակյան կուսակցության, Վանիկ մասնաճյուղը (1986-ից), ՀԲԸՄ Սոնրեալի մասնաճյուղը (1956-ից) եւ Ալեք Մանուկյան մարզամշակութային կենտրոնը, ՀՕՄ-ի, Սոսեե մասնաճյուղը (1957-ից), Թեքեյան [1956-ից, ունեցել է Հայ բեմ թատերախումբ (1975-83) եւ, Նայիրի պարախումբ (1981-90), 1978-ից՝ Սեւանե պատանեկան ամառային ճամբար], Համազգային (1963-ից, ունի Պետրոս Դուրյանե թատերախումբ, Քնար երգչախումբ, Մնի պարախումբ), Նոր Մերունդ (1989-ից) մշակութային միությունների, Հայաստանե համահայկական հիմնադրամի (1993-ից) Սոնրեալի մասնաճյուղերը, Պոլսահայ մշակութային միությունը (1967-ից, ունի Մնակյան թատերախումբ, Շիրակ պարախումբ, Արարատ մարզական թիմ եւ երիտասարդական բաժին), Սոնրեալի եգիպտահայերի ընկերակցությունը (1997-ից), Մալխասյան հիմնարկը, Մամիկոնյան մշակութային հանձնախումբը, Հայ դատի հանձնախումբը, Հայ ուսանողական միությունը, Կանադահայ բժիշկների միությունը, Հայ կաթոլիկ միության, Ալիշան թատերախումբը, Արմենիա ֆուտբոլի թիմը, հայկական ռադիոժամ (1968-ից): Լույս են տեսնում, Ապագա, Հորիզոն շաբաթաթերթերը, Բուրաստան հանդեսը, Գեղարդ եռամսյան, Հայ կաթոլիկ միության, Նոր տեղեկատու ամսաթերթը:

Սենտ Կաթրինա հայերի առաջին խմբերը եկել են 1904-ին: 1918-ին այստեղ կազմվել է առաջին ազգային հոգաբարձությունը: 1919-ին բացվել է Կանադայի առաջին հայկական դպրոցը: 1925-ին Լեւոն Պապայանի եւ պրոֆեսոր Բաղդասարյանի գլխավորությամբ հիմնվել է Կանադահայ միությունը, որի նպատակն էր պաշտպանել

Կանադայի հայերի քաղաքացիական իրավունքները, բացել հայկական դպրոցներ, նպաստել ազգապահպանմանը: 1930-ին բացվել է Հայ տունը: Նույն թվականին օժվել է Կանադայում առաջին հայկական եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, հիմնվել են եկեղեցուն կից մարմիններ: Ներկայումս (2009) Մենս Կաթրինգում բնակվում է շուրջ 500 հայ:

Տորոնտոյում հայերը բնակություն են հաստատել XIX դ. վերջից: Սակայն համայնքը սկսել է կազմավորվել 1920-ական թթ.: 1916-ին Լեոն Պապայանի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայերի օգնության միությունը, 1923-ին՝ ՀԲԸՄ Տորոնտոյի մասնաճյուղը: 1953-ին կառուցվել է Սուրբ Երրորդություն հայկական եկեղեցին, գործում են նաև Սուրբ Խաչ, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցիները, որոնց կից՝ մեկօրյա դպրոցներ: Համայնքում կա երեք ամենօրյա վարժարան: Ազգային կուսակցությունները ներկա են համայնքում իրենց կոմիտեներով, ակումբներով, մասնաճյուղերով: Գործում են ՀՀԴ, Սողոմոն Թեկերյան կոմիտե (1956-ից) եւ ՀՀԴ երիտասարդական միության, Սիմոն Չավարյան մասնաճյուղը, ՌԱԿ, Եսայի Յաղոբյան ակումբը (1967), ՄԴԿՀ, Փարամազ մասնաճյուղը (1983-ից), ՀՕՄ-ի, Ռուբինա (1964-ից), Թեքեյան (1967-ից), Համազգային (1969-ից, ունի ժողով Մարգիսյան թատերախումբ, Գուսան երգչախումբ, Էրեբունի պարախումբ), Նոր սերունդ (1978-ից) մշակութային միությունների, Պոլսահայ մշակութային միության (1988-ից), Հայաստան համահայկական հիմնադրամի (1993-ից), Հայկական ժամանակակից հետազոտությունների եւ փաստագրության Ջորյան ինստիտուտի (1985-ից) մասնաճյուղերը, Պապայան հիմնարկը, Հայ դատի հանձնախումբը, Տարեց քաղաքացիների ընկերությունը, Կոմիտաս երաժշտական միությունը: Լույս են տեսնում Նոր սերունդ ամսագիրը, ՀԲԸՄ, Խոսնակ Տորոնտոյի, Լուսաբաց պարբերականները: Գործում է Հայ հորիզոն հեռուստակայանը: Տեղի հայերի գլխավոր հավաքատեղին Հայ կենտրոնն է: Տորանտոն կանադահայության երկրորդ խոշոր կենտրոնն է Մոնրեալից հետո: Ներկայումս (2009) այստեղ բնակվում է շուրջ 30 հազար հայ:

## ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանյաց առաքելական եկեղեցու Կանադայի թեմը կազմավորվել է 1984-ին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով: Առաջնորդանիստը Մոնրեալի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Թեմի առաջնորդն է Բագրատ եպս.

Գալստանյանը (2003-ից): 1990-2003-ին թեմը գլխավորել է Հովնան արք. Տերտերյանը:

Թեմի կազմավորումից առաջ Կանադայի հայ համայնքի հոգևոր կարիքները հոգացել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի առաջնորդարանը: Սկզբնական շրջանում կրոնական արարողությունները կատարել են այցելու հովիվները բնակարաններում կամ վարձված տաճարներում: Առաջին ազգային հոգաբարձությունը կազմակերպվել է 1918-ին, Սենտ Կաթրինգում: 1930-ին կառուցվել է Կանադայի առաջին հայկական եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը (Սենտ Կաթրինգում):

Մոնրեալի հայ համայնքի եկեղեցական կյանքը պաշտոնապես կազմակերպվել է 1948-ին, երբ ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տիրան Եպս.Ներսոյանի ներկայությամբ կազմվել է եկեղեցական հանձնախումբ (6 հոգուց բաղկացած): Այդ ժամանակաշրջանում եկեղեցական արարողությունները կատարվել են Սուրբ Հովհաննես Մկրտիչ անգլիական եկեղեցում:

1957-ին Կանադայի իշխանությունները ստորագրել են երկրում Հայաստանյայց առաքելական եկեղեցու պաշտոնական ճանաչման դիմումը: 1967-ին ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Թորգոմ արք. Մանուկյանի եւ թեմական խորհրդի որոշմամբ ստեղծվել է Կանադայի Հայ եկեղեցու փոխանորդություն: Առաջնորդական փոխանորդ է նշանակվել Վաչե Եպս. Հովսեփյանը: 1970-ին ծխական խորհրդի որոշմամբ գնվել է եկեղեցի, որը նույն թվականին Պոլսի պատրիարք Շնորհք Գալուստյանը օժել է որպես առաջնորդանիստ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ անունով: Առաջնորդարանի ենթակայությամբ գործում են 10 ծուխ, 5 ծխական վիճակներ: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործում է շաբաթօրյա դպրոց (1957-ից), մշակութային միություն՝ ,Հայ մշակույթի շրջանակե անունով (1993-ից), տարեցների, տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1964-ից եկեղեցու նախաձեռնությամբ հրատարակվում է , Բուրաստան երկամսյա հանդեսը:

Տորոնտոյի հայ համայնքը սկսել է կազմավորվել 1920-ական թթ., առաջին եկեղեցական հոգաբարձությունը ստեղծվել է 1948-ին: Կրոնական արարողությունները կատարվել են Սուրբ Ստեփանոս, 1930-53-ին՝ Սուրբ Երրորդություն անգլիական եկեղեցիներում: 1953-ին կատարվել է Տորոնտոյի հայկական առաջին՝ Սուրբ Երրորդություն եկեղեցու օծումը: Եկեղեցուն կից 1956-ից գործում է



Սուրբ Մահակ Սուրբ Մեսրոպ դպրոցը, 1978-ից՝ Սուրբ Խաչ ամենօրյա ազգային վարձարանը, մշակութային հանձնախմբեր, տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1987-ին Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանն օծել է հայկական ճարտարապետական ոճով կառուցված (ճարտարապետ՝ Թագվոր Հակոբյան) Սուրբ Երրորդություն եկեղեցին, որին կից գործում են ամենօրյա վարժարան, մշակութային հանձնախմբեր (Կամարե, գործում է 1992-ից), տիկնանց, երիտասարդական կազմակերպություններ: 1987-ից եկեղեցու վարչությունը հրատարակում է ,Նոր սերունդե պարբերաթերթը:

Առաջնորդարանի ենթակայությամբ են գործում նաև Վանկուվերում՝ Սուրբ Վարդան (կառուցվել է 1964-ին), Համիլտոնում՝ Սուրբ Աստվածածին (1976), Օտտավայում՝ Սուրբ Մեսրոպ (1979), Միսիսսոկայում՝ Սուրբ Վարդան (1990), Լավալում՝ Սուրբ Խաչ (1993), Վինձորում՝ Սուրբ Հարություն (1995) եկեղեցիները: Վանկուվերի, Սենտ Կաթրինգի, Համիլտոնի, Լավալի եկեղեցիներն ունեն մշտական հովիվներ: Մյուս եկեղեցիները, թեև օծված են ծխական մարմիններով, սակայն ունեն միայն այցելու հովիվ: Վերջին շրջանում կազմվել են Նովա Սկոչիայի, Վիննիպեգի, Քինգստոնի, Էդմոնտոնի եւ Կալգարիի ծխական վիճակները: Այդ քաղաքներում բնակվող սակավաթիվ հայ ընտանիքների հոգեւոր կարիքները հոգում են այցելու հովիվները:

Կանադայի թեմը ներկայացնում է Հայ եկեղեցին Եկեղեցիների կանադական խորհրդում: 1959-ին կանադահայ մի խումբ գործիչներ, անջատվելով էջմիածնական հոգեւոր համայնքից, անցել են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանու տակ եւ Մոնրեալում հիմնել Սուրբ Հակոբ եկեղեցին: Այդ բաժանումը բացասաբար է անդրադարձել գաղութի ազգային հավաքական կյանքի վրա: Կանադահայ համայնքի անթիլիասական հատվածը վարչականորեն ընդգրկված է 1957-ին կազմավորված Հյուսիսային Ամերիկայ արևելյան նահանգների եւ Կանադայի թեմի մեջ (կենտրոնը՝ Նյու Յորք): Թեմի հովանավորությամբ են գործում նաև Լավալի Սուրբ Գեւորգ (1993), Տորոնտոյի Սուրբ Աստվածածին (1985) եւ Քեմբրիջի Սուրբ Նշան եկեղեցիները: Սուրբ Հակոբ եկեղեցուն կից գործում է Վարդգես Մարաֆյան երկրորդական դպրոցը, Տորոնտոյի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից՝ ՀՕՄ-ի Քոլոյան վարժարանը: Կանադայի հայ կաթողիկե եւ ավետարանական համայնքները նույնպես ունեն իրենց եկեղեցիները՝ համապատասխան կրթական ու մշակութային կառույցներով: Մոնրեալում գործում է Տիրամայր

Նարեկի (1966-ից), Տորոնտոյում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (1974-ից) հայ կաթոլիկ եկեղեցիները, որոնք ենթակա են Հայ կաթողիկե եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի թեմին (կենտրոնը՝ Նյու Յորք): Կան հայ ավետարանական 4 եկեղեցիներ, երկուսը՝ Մոնրեալում (հիմնվել են 1960 եւ 1964-ին), մեկը՝ Տորոնտոյում (1960), մյուսը՝ Քեմբրիջում (1969): Մոնրեալի առաջին եւ Տորոնտոյի եկեղեցիները կապված են Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական եկեղեցիների միությանը, իսկ մյուս երկուսը մաս են կազմում Կանադայի միացյալ եկեղեցու (The United Church of Canada):

## ԴՊՐՈՑ

Առաջին հայկական դպրոցը Կանադայում հիմնվել է 1919-ին, Սենտ Կաթրինգում: 1930-ին Իսկուհի Հազարյանի եւ Ռեբեկա Գալիակճյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է Մոնրեալի հայուհյաց բարենպաստակ միությունը, արի անդամ Եվնիկե Ղարիբյանի հիմնած դպրոցում շաբաթը երեք օր պարապել են հայոց լեզու եւ գրականություն: Դպրոցն ընդլայնվել է եւ գործել մինչև 1944-ը: Կրթական գործն առաջ տանելու հաջորդ քայլը եղել է 1950-ական թթ. բոլոր համայնքներում հայկական եկեղեցիներին կից մեկօրյա դպրոցների հաստատումը, որտեղ երեխաները 3-4 ժամ պարապել են հայոց լեզու, գրականություն, պատմություն, երգ, պար:

Մեկօրյա դպրոցներից հայտնի են Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցուն կից գործող Սուրբ Սահակ Սուրբ Մեսրոպ դպրոցը (1956-ից), Մոնրեալի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (1957-ից) եւ Սուրբ Հակոբ (1959-ից) եկեղեցիների շաբաթօրյա դպրոցները: 1970-ից գործում է Վանկուվերի մեկօրյա դպրոցը, 1980-ից՝ Տորոնտոյի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայ կաթոլիկ եկեղեցու շաբաթօրյա դպրոցը: 1996-ին մեկօրյա վարժարաններում սովորել է 530 աշակերտ (45 ուսուցիչ): Ամենօրյա դպրոցների հիմնումը Կանադայի համայնքում սկսվել է 1970-ական թթ.: Ամենօրյա վարժարանները նախ սկսել են մանկապարտեզի եւ նախակրթարանի մի քանի դասարանով, ապա յուրաքանչյուր տարի ավելացնելով մեկական դասարան՝ հասել են երկրորդական վարժարանի մակարդակի: Բոլոր վարժարաններում գործում են պետական արտոնությամբ, ոմանք նույնիսկ ստանում են պետական մասնակի նպաստ: Պետական կրթական ծրագիրը պարտադիր է, դասավանդման պաշտոնական լեզուն՝ անգլերենը կամ ֆրանսերենը: Հայոց լեզվի եւ հայերենով դասավանդվող առարկաներին հատկացված է միջին հաշվով՝ մանկապարտեզի եւ նախակրթարանի համար՝ շաբաթական 8-12 ժամ, միջնակարգ եւ

երկրորդական դասարաններում՝ 5-7 ժամ: Ամենօրյա դպրոցներն ունեն հատուկ մանկական կամ պատանեկան երգչախումբ, պարախումբ կամ թատերախումբ: Ներկայումս գործում են հայկական 6 ամենօրյա վարժարաններ: ՀԲԸՄ Դանիել և Ալիս Զարուկյան վարժարան, ամենօրյա տարրական դպրոց, հիմնել է ՀԲԸՄ-ն 1985-ին, Տորոնտոյում: Ընդգրկում է մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններ: 1996-ին ուներ 125 աշակերտ և 13 ուսուցիչ:

Սուրբ Խաչ ազգային վարժարան, ոչ լրիվ միջնակարգ ամենօրյա դպրոց, հիմնվել է 1978-ին, Տորոնտոյում: Ընդգրկում է տարրականից մինչև 6-րդ դասարան: 1996-ին ուներ 100 աշակերտ և 10 ուսուցիչ-դաստիարակ:

Քոլոլյան վարժարան, ամենօրյա դպրոց, հիմնել է Հայ օգնության միությունը 1979-ին, Տորոնտոյում: Ընդգրկում է մանկապարտեզի բաժնից մինչև 8-րդ դասարան: 1996-ին ուներ 370 աշակերտ և 25 ուսուցիչ:

Սուրբ Հակոբ վարժարան, ամենօրյա երկրորդական վարժարան, հիմնվել է 1973-ին, Մոնրեալում: Սկզբում որպես Սուրբ Հակոբ եկեղեցու ծաղկոց՝ նախադպրոցական տարիքի երեխաների համար, այնուհետև, տարիների ընթացքում ավելացել են նախակրթարանի և միջնակարգի բաժինները, հասել լրիվ երկրորդական վարժարանի մակարդակի (11 դասարան): 1996-ին ուներ 780 աշակերտ, 54 ուսուցիչ:

ՀԲԸՄ Արմեն Քեպեք-Ալեք Մանուկյան վարժարան, ամենօրյա երկրորդական վարժարան, ընդգրկում է մանկապարտեզից մինչև 8-րդ դասարան: Հիմնվել է 1970-ին, Մոնրեալում: Ներկայումս ունի 550 աշակերտ, 48 ուսուցիչ: Տվել է շուրջ 1500 շրջանավարտ: Հայ կաթողիկե Նարեկ վարժարան, ամենօրյա դպրոց, հիմնվել է 1988-ին, Մոնրեալում: Ընդգրկում է մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններ: 1996-ին ուներ 230 աշակերտ և 25 ուսուցիչ-դաստիարակ:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա դպրոց (Զեռքջինա Սարգսյան, Օնտարիո) Հայկական առաքելական Սուրբ Երրորդություն եկեղեցու կիրակնօրյա դպրոց (Թալինե Գյումուշջյան, Տորոնտո, Օնտարիո) Սուրբ Վարդան հայկական առաքելական եկեղեցու կիրակնօրյա դպրոց (Մեդա Չակերյան, Մակ Լենան, Օնտարիո) Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի կիրակնօրյա դպրոց (Յուրի Հակիմյան, Մոնրեալ, Քվեբեկ) Սուրբ Մերի հայկական առաքելական եկեղեցու կիրակնօրյա դպրոց (Ալեքսիա Գիտակ, Համիլտոն, Օնտարիո)

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Կանադահայ համայնքում գործող քաղաքական հասարակական, բարեգործական, հայրենակցական, կրթական, երիտասարդական, մարզական, մշակութային կազմակերպությունների հիմնական խնդիրն է հայապահպանությունը, Հայ դատի հետապնդումը, հայրենիքի հետ կապերի զարգացումը են:

Հայ հեղափոխական դաշնակցությունը 1910-20-ական թթ. տեղական կազմակերպություններ է ստեղծել Հարավային Օնտարիոյի փոքր քաղաքներում (Ֆրենտֆորդ, Համիլտոն, Մենտ Կաթրինգ), որտեղ ավելի շատ հայեր կային, քան մեծ քաղաքներում: ՀՀԴ տեղական կազմակերպությունները ենթակա էին ԱՄՆ-ի կենտրոնական վարչությանը: 1950-ական թթ. փոքր քաղաքների հայությունը նուսրացել էր, իսկ նորեկ հայերը նախընտրել են մեծ քաղաքները, եւ կուսակցական գործունեությունն էլ կենտրոնացել է այդ վայրերում: 1956-ին Մոնրեալում հիմնվել է ՀՀԴ ,Միհրան Փափազյանե կոմիտեն, Տորոնտոյում՝ ,Սողոմոն Թեհլերյան կոմիտեն, ինչպես նաեւ ՀՀԴ Կանադայի երիտասարդական միության ,Լեւոն Շանթ մասնաճյուղը: Ստեղծվել են նաեւ մշակութային, երիտասարդական եւ այլ օժանդակ կառույցներ: Լույս է տեսնում ՀՀԴ ,Հորիզոնե պաշտոնաթերթը:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Կանադայի հայ համայնքում սկսել է գործել, ինչպես եւ ՀՀԴ-ն, 1910-20-ական թթ.: Կազմակերպություններ է ստեղծել հիմնականում Բրենտֆորդ, Համիլտոն, Մենտ Կաթրինգ քաղաքներում: 1950-ական թթ-ից գործունեություն է ծավալել առավել հայաշատ քաղաքներում: 1983-ին Տորոնտոյում հիմնվել է ,Փարամազե, 1986-ին Մոնրեալում՝ ,Վանիկ մասնաճյուղերը, ինչպես նաեւ մշակութային, երիտասարդական, մարզական կառույցներ են: 1982-ից հրատարակում է ,Լուսաբացե պարբերաթերթը:

Հայկական բարեգործական ընդհանուր միության առաջին մասնաճյուղը Կանադայում հիմնվել է Տորոնտոյում, 1923-ին, Լեւոն Պապայանի գլխավորությամբ: Մինչեւ 1950-ական թթ.

զգալի օգնություն է ցույց տվել հայ գաղթականներին եւ աղետյալներին: 1981-ից ունի իր սեփական շենքը, որտեղ գործում են մշակութային հանձնախումբը, երիտասարդական բաժինը, մարզական եւ արհմերի խմբեր, պարախումբ: Հրատարակում է ,Խոնակե տեղեկատու պարբերաթերթը: Մոնրեալի մասնաճյուղը հիմնվել է 1957-ին՝ Խաչիկ Շիրոյանի եւ Քերովբե Պտուկյանի ջանքերով: 1977-ից ունի իր շենքը: Գործում են մշակութային եւ տիկնանց հանձնախմբեր, 1964-ից՝ մարզական խմբեր (բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի), որոնք տարին մեկ կազմակերպում են ,Նավասարդյանե խաղեր, երիտասարդական բաժին: 1970-ից գործում է ՀԲԸՄ Արմեն Քեպեք-Ալեք Մանուկյան վարժարանը: Կարճ ժամանակով՝ 1978-ին, լույս է ընծայել ,Նոր այգե տեղեկատու պարբերաթերթը:

ՀԲԸՄ, Տորոնտո 2002-ի դեկտեմբերին Կանադայի կառավարությունը Մոնրեալի ՀԲԸՄ մշակութային հանձնախմբի նախագահ Արսինե Աթթարյանին շնորհել է ,Էլիզաբեթ Բ թագուհու հոբելյանական ոսկե մեդալը՝ ի գնահատումն հայ համայնքի բարգավաճմանն ուղղված նրա գործունեության:

Կանադական հայկական կոնգրես (Canadian Armenian Congress) կազմակերպությունը հիմնվել է 1948-ի ապրիլի 3-ին: Հիմնադիրներ եւ անդամներ՝ Ջոն Մուրադյան, Լեւոն Պապայան, Երվանդ Փաստրմաճյան, Քերովբե Պտուկյան, Ջոն Տեր-Ստեփանյան, Սեդրակ Ատուրյան: Պատվո նախագահն էր աշխարհահռչակ լուսանկարիչ Յուսուֆ Քարշը: Կոնգրեսի գլխավոր նպատակն էր դյուրացնել հայ գաղթականների մուտքը Կանադա, փոխել տալ հայերի նկատմամբ երկրի ներգաղթի քաղաքականությունը: Կոնգրեսի ջանքերի շնորհիվ Կանադայի խորհրդարանի 1952-ի հուլիսի 4-ի նիստի քննարկումների արդյունքում հայերը հանվել են ,ասիական ցեղե դասակարգումից: 1952-ից սկսած՝ Կանադա ներգաղթած հայը կարող էր իր հերթին երաշխավորել մի այլ հայի, ինչի շնորհիվ աճել է ներգաղթողների թիվը: 1950-66-ին Կանադա է ներգաղթել 6337 հայ: 1968-ին Կանադայի ներգաղթի նախարարության որոշմամբ Կոնգրեսը, որը քսան տարի գործակցել էր նախարարության հետ, լուծարվել է:

Ռամկավար ազատական կուսակցությունը կանադահայ համայնքում իր տեղական կազմակերպությունը հիմնել է 1950-

ական թթ.: 1963-ին Մոնրեալում բացել է ,Էոժեն Փափազյանե ակումբը, 1967-ին Տորոնտոյում` ,Եսայի Յաղությանե ակումբը: ,Էոժեն Փափազյանե ակումբին կից գործում է Հայ իրավանց խորհուրդը, որը հաճախ համագործակցում է ՀՀԴ Հայ դատի հանձնախմբի հետ` համազգային նշանակության հարցերի հետապնդման եւ Ապրիլի 24-ի հիշատակի օրվա միջոցառումների առիթներով: ՌԱԿ-ը ունի նաեւ մշակութային, երիտասարդական եւ այլ կառույցներ: 1975-ից հրատարակում է ,Ապագաե պաշտոնաթերթը:

Հայ օգնության միության Մոնրեալի մասնաճյուղը հիմնվել է 1957-ին, Տորոնտոյինը` 1964-ին: Հետագա տարիներին մասնաճյուղեր են հիմնվել նաեւ Կանադայի այլ համայնքներում: Ստեղծման օրվանից ՀՕՄ-ը զբաղվել է մարդասիրական օգնությամբ, հովանավորել դպրոցներ եւ կրթական ծրագրեր, պատանեկան ճամբարներ, հատկապես օգնել կարիքավոր եւ տարեց հայրենակիցներին:

ՀՄԸՄ-ԿԱՄՔ, հիմնվել է Մոնրեալում, 1958-ին: ,Կամքըե միացել է ՀՄԸՄ-ին 1966-ին: Հիմնական անդամները Եգիպտոսից գաղթածներն են: ՀՄԸՄ 1958-ին ուներ ֆուտբոլի թիմ, որը կազմված էր գլխավորապես Հունաստանից գաղթած հայ պատանիներից: Ներգաղթողների թվի ավելացմանը զուգընթաց միությունը կազմակերպել է տղամարդկանց եւ կանանց, երիտասարդների եւ պատանիների մարզական թիմեր, որոնք մասնակցում են բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի եւ այլ մրցումների:

,Մամիկոնյան մշակութային կոմիտե, հիմնվել է 1959-ին, Մոնրեալում: Գործում է Հայաստանյայց առաքելական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կազմակերպական կառույցի հովանու ներքո: Բեմադրում է պիեսներ, օպերետներ կազմակերպում երգչախմբային համերգներ, հրապարակային դասախոսություններ հայ մշակույթի մասին եւն: 1970-ին հիմնվել է ,Վիլյամ Սարոյանե թատերախումբը, 1976-ին` ,Արմենյանե թատերախումբը:

Համազգային մշակութային միության Կանադայի առաջին մասնաճյուղը հիմնվել է 1963-ին, Մոնրեալում: 1969-ին հիմնվել է Տորոնտոյի, 1976-ին` Համիլտոնի, 1977-ին` Քեմբրիջի, 1981-ին`

Վանկուվերի մասնաճյուղերը: Այս մասնաճյուղերի գործունեությունը 1975-1977-ին համադրում էր Հյուսիսայի Ամերիկայի Արեւելյան շրջանի վարչությունը: 1977-ին ընտրվել է Կանադայի շրջանային վարչությունը:

Վարչության հովանավորությամբ կազմվել է հանձնախումբ, որը խթանում է հայ գրքի տարածումը Կանադայի բոլոր քաղաքներում: Միության հովանավորությամբ գործում են ,Ադամյանե, ,Սարգիսյանե թատերախմբերը, ,Քնարե, ,Գուսանե երգչախմբերը, ,Անիե, ,Էրեբունիե ժողովրդական պարերի խմբերը: Ունի նաեւ գրադարան՝ 4 հազար կտոր գրքով (հայերեն, ֆրանսերեն, անգլերեն): Միությունը կազմակերպում է գեղարվեստական ցուցահանդեսներ, հրապարակային դասախոսություններ հայոց պատմության եւ մշակույթի, գրականության վերաբերյալ:

Գործում են ,Համագրային ձայնե ռադիո (1969-ից) եւ ,Հորիզոն (1984-ից) հեռուստածրագրերը: Թեքեյան մշակութային միության Կանադայի մասնաճյուղը հիմնվել է 1965-ին, Մոնրեալում: Թեքեյան մշակութային կենտրոններ կան Մոնրեալում եւ Տորոնտոյում: Միության հովանավորությամբ գործել են ,Հայ բեմե թատերախումբը (1975-1983թթ.) ժողովրդական պարերի ,Նաիրիե խումբը ( 1981-1990թթ.): 1978-ից կազմակերպվում է ,Սեւանե պատանեկան ամառային երկամսյա ճամբարը: Տորոնտոյի մասնաճյուղը հիմնվել է 1967-ին, կազմվել է սեփական թատերախումբ եւ երգչախումբ, ստեղծել Տորոնտոյի առաջին ռադիոժամբ: Միությունը կազմակերպում է նաեւ հրապարակային դասախոսություններ հայոց պատմության եւ մշակույթի մասին, գեղարվեստական ցուցահանդեսներ: Հրատարակում է ,Ապագա շարաթաթերթը, ունի , Թեքեյանի ձայն (1978-ից) ռադիոժամբ:

Պոլսահայ մշակութային միություն, հայրենակցական մշակութային կազմակերպություն: Հիմնել են Կանադա գաղթած պոլսահայերը 1967-ին, Մոնրեալում: 1988-ին միության մասնաճյուղ է հիմնվել Տորոնտոյում: Միության հովանավորությամբ գործում են ,Մնակյանե թատերախումբը, ,Շիրակե պարախումբը, ,Արարատ Մարզական թիմը, ,Մայա երիտասարդաց կազմակերպությունը: 1969-ից հրատարակում է ,Գեղարդ պաշտոնաթերթը:

Պոլսահայ մշակութային միության հովանու տակ գործում է ,Մեկե մշակութային հանձնախումբը, որը կազմակերպում է հայերենի

ուսուցման դասընթացներ, գրական եւ գեղարվեստական ցուցահանդեսներ:

Հայ դատի հանձնախմբի Կանադայի մասնաճյուղը հիմնվել է 1970-ին: Նպատակն է պաշտպանել հայ ժողովրդի ազգային ձգտումները, ներկայացնել հայության տեսակետները բոլոր մակարդակներով, ճանաչել տալ Հայոց ցեղասպանության փաստը եւ Հայ դատի օրինականությունը, հասնել խնդրի քաղաքական լուծմանը:

Քվեբեկի հայ բժշկական ընկերակցություն, հիմնվել է 1975-ին: Անդամներն էին բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ: Նպատակն էր օգնել եւ ուղղորդել բժշկության ասպարեզ մուտք գործելու ցանկություն ունեցողներին, ստեղծել Քվեբեկում աշխատող հայ բժիշկների հավաքատեղի-կենտրոն, որտեղ տեղեկություններ կփոխանակեին իրենց մասնագիտությունների վերաբերյալ, հոգալ Քվեբեկի հայ համայնքի բժշկական կարիքները: Այս միության ջանքերով է կազմակերպվել հայ բժիշկների III համաշխարհային կոնգրեսը 1984-ին, Մոնրեալում: Նոր սերունդ մշակութային միություն, հիմնվել է 1978-ին, Տորոնտոյում, Մոնրեալի մասնաճյուղը՝ 1989-ին: Հիմնական նպատակն է սփյուռք-հայրենիք կապերի գորացումը: Մոնրեալի մասնաճյուղի հովանավորությամբ գործում է Հայ մարմնամարզական միությունը (ՀՄՄ):

Քվեբեկի հայագիտական ուսմանց միություն, հիմնվել է 1982-ին: Հաստատել է հայոց լեզվի, գրականության եւ պատմության դասընթացներ Քվեբեկի նահանգի համալսարաններում եւ քոլեջներում, մասնավորապես Կոնկորդիա համալսարանում դասավանդվում է հայոց լեզու: 1983-ին հրատարակել է ,Լրատու Ե պարբերաթերթը:

Կանադայի Ջորյան հաստատություն, հայկական ժամանակակից հետազոտությունների եւ փաստագրության ինստիտուտ, հիմնվել է 1985-ին, Տորոնտոյում (կենտրոնը՝ Բոստոն, ԱՄՆ): Հրատարակում է գիտական ուսումնասիրություններ, արխիվային փաստաթղթեր, կազմակերպում ,բաց համալսարաններ: 1991-ից լույս է ընծայում , Diaspora Journal հանդեսը (տարին երեք համար)՝ Տորոնտոյի համալսարանի հրատարակությամբ:



Կանադայի հայ առեւտրական խորհուրդ, հիմնվել է 1986-ին, Մոնրեալում: Խորհուրդը մասնաճյուղեր ունի Կանադայի հայ համայնքներում: Նպատակն է զորեղացնել հայ գործարարների միջեւ համագործակցությունը, օգնել հայկական ապրանքների առեւտրի զարգացմանը Կանադայում:

,Րաֆֆի մշակութային միություն, հիմնվել է 1988-ին: Համախմբում է կանադաբնակ իրանահայերին: Նպաստում է հայ մշակույթի պահպանմանն ու առաջընթացին: Ունի կանանց եւ երիտասարդական խմբեր, նաեւ ֆուտբոլի թիմ: Օնտարիո նահանգի կանադահայ բժշկական ընկերակցություն (ACMAO), բարեսիրական կազմակերպություն, հիմնվել է 1988-ին:

Ընկերակցության ատամնաբուժական մասնաճյուղը ստեղծվել է 1992-ին: Զգալի օգնություն է ցուցաբերել Հայաստանի ատամնաբուժական հիմնարկներին:

Մոնրեալի եգիպտահայերի ընկերակցություն, հայրենակցական միություն, հիմնվել է 1997-ին: Զբաղվում է մշակութային եւ բարեսիրական գործունեությամբ, համագործակցում համայնքի բոլոր քաղաքական ուժերի եւ միությունների հետ:

## ՄՇԱԿՈՒՅԹ

Կանադայի մշակութային կյանքը հարուստ եւ բազմազան է: Ազգային երաժշտության զարգացման եւ տարածման գործում որոշակի ներդրում ունեն կատարողական արվեստի ներկայացուցիչները՝ երգիչ-երգչուհիներ Ա.Աբգարյանը, Ալին Գութանը, Դավիթ Վարժապետյանը, դաշնակահարներ Րաֆֆի Արմենյանը (նաեւ դիրիժոր, Երեւանում ելույթ է ունեցել 1999-ին), Նորայր Արթինյանը, Գրիգոր Շավերտյանը, Լ.Ֆստըքճյանը, ջութակահարներ Վ.Արմենյանը (Երեւանում ելույթ է ունեցել 1999-ին), Նուրհան Արմանը (նաեւ դիրիժոր), Հ.Շեհիրյանը, Դ.Իմաստունյանը, կոմպոզիտորներ Պետրոս Շուժունյանը, Միհրան Էսեկույանը, Գեորգ Անտոնյանը, դիրիժոր Հարութ Ֆազյանը եւ ուրիշներ: Հայտնի են երաժշտական քննադատ Սարիվոն Քենտերճին, օպերային երգիչ Արտո Մուհենտիսյանը, սուպրանո Իզաբել Բայրաքդարյանը:

Երաժշտական խմբերից են ,Արմենիա նվագախումբը, ,Նուբար, ,Շիրակ պարախմբերը, ,Քնար (1946, ղեկավար՝ Ե.Ալեքսանյան), ,Հայաստան (1968, ղեկավար՝ Սարգիս Համպոյան), ,Անի (1975, ղեկավար՝ Դ.Վարժապետյան) երգչախմբերը են: Քվեբեկում բալետի դպրոց է հիմնել Սուրբ Զարեհը, Մոնրեալում բալետի խումբ է ղեկավարում Սոնա Վարդանյանը, Կանադայի ազգային բալետի մենապարողներից է Ղ. Սուրմեյանը: Լայն գործունեություն է ծավալել , Կոմիտասե երաժշտական միությունը: Նշանավոր թատերական գործիչ Պերճ Ֆազլյանը 1976-ից ղեկավարում է ԹՄՄ-ի ,Հայ բեմե թատերախումբը: Գործում են նաև ,Արմենյան (1976, ղեկավար՝ Սելմա Քելկիկյան), ,Մանուկյանե (1992, ղեկավար՝ Արմեն Երկաթ, բալետային խմբի ղեկավար՝ Իրինա Երկաթ) եւ այլ թատերախմբեր: Բազմաթիվ գեղարվեստական ֆիլմերի հեղինակ է կինոռեժիսոր Ատոմ Էզոյանը, որի կինոնկարներում նկարահանվում է նաև կինը՝ Արսինե Խանջյանը: Ա.Էզոյանն իր ինքնատիպ արվեստով հասել է միջազգային ճանաչման: Նրա ֆիլմերը միջազգային կինոփառատոններում արժանացել են 2 Գրան պրիի (Կանն), ,Ոսկե դուկատիե (Մանհայմ): 1993-ին Հայաստանում նկարահանել է ,Օրացույց ֆիլմը: Մեծ արձագանք ունեցավ նրա ,Արարատ (2002, ցուցադրվել է նաև Կաննում եւ Երեւանում) ֆիլմը, որը նվիրված է հայերի ցեղասպանությանը: Բեմադրել է նաև օպերաներ: Հայտնի են նաև Արթո Բարադամյանի, Լենա Երեցյանի ստեղծած գեղարվեստական ֆիլմերը: կարճամետրաժ կինոնկարների հեղինակ է Կարինե Թորոսյանը (ֆիլմերը ցուցադրվել են Երեւանում, 1998): Կերպարվեստի բնագավառում հայտնի են նկարիչներ Արման Թադոսյանը, Անահիտ Աբրահամյանը, Ջուլիա Նեյշեհիրյանը, քանդակագործ Եվգինեն, լուսանկարիչներ Յուսուֆ Քարշը, Արթին Գավուքը, Ռոյ Թաշը: Յուսուֆ Քարշըի անունն ընդգրկվել է միջազգային ,Ո՞վ ով է հանրագիտարանի հրատարակիչների պատրաստած՝ XX դարի 100 ամենահայտնի մարդկանց ցանկում:

Գաղութի հասարակական եւ մշակութային կյանքի հայտնի գործիչներից է Հարություն Արզումանյանը: Նրա ,Նշմարներե գրքում ամփոփված են տարբեր տարիների գրած հրապարակախոսական հոդվածները, խոհերն ու մտահոգությունները կանադահայ համայնքի մասին:

## ՄԱՄՈՒԼ

Կանադայում ցայսօր լույս է տեսել 21 անուն հայկական պարբերական: 1926-ին Ջորջթաունում հրապարակվել է Կանադայի հայորդիների միության ,Արարատ ամսագիրը, որը 1927-ին շարունակվել է ,Արագածե անունով: Պարբերականները նպաստել են ազգապահպանման ջանքերին, որիտասարդ սերնդի դաստիարակությանը: Գրեթե յուրաքանչյուր եկեղեցի ունի իր լրատու թերթիկը: Եղել են և անհատական նախաձեռնությամբ հրատարակություններ. 1983-94-ին լույս է տեսել Բաբկեն Թոփչյանի ,Արմաշե եկեղեցական, պատմական ու կրոնական բովանդակությամբ հանդեսը:

,Ապագա, հասարակական-քաղաքական, մշակութային շաբաթաթերթ: ՌԱԿ պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1975-ից, Մոնրեալում: Խմբագիր՝ Արսեն-Նուբար Մամուրյան: Ծանոթացնում է կանադահայ գաղութի և սփյուռքի առօրյային, ներկայացնում Հայաստանը՝ իր ներքին և արտաքին խնդիրներով: Գրական բաժնում տպագրում է հայ գրողների գործեր: Ունի անգլերեն և ֆրանսերեն բաժիններ: Տասներկու հայերեն էջերից բացի, ունի երկուական էջ անգլերեն և ֆրանսերեն հավելվածներ:

“Բուրաստան”, կրոնաբարոյական, մշակութային, հասարակական երկամսյա հանդես: Լույս է տեսնում 1964-ից, Մոնրեալում: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական եկեղեցու պաշտոնաթերթն է: Բովանդակում է հոդվածներ կրոնի, գրականության, մշակույթի մասին և այլ ընդհանուր տիպի երկեր: ”Գեղարդ”, գրական, մշակութային եռամսյա պարբերաթերթ: Լույս է տեսնում 1969-ից, Մոնրեալում: Հրատարակում է Պոլսահայ միությունը: Ունի խմբագրական կազմ: Տպագրում է հայ հեղինակների երկեր, քննադատական ակնարկներ, լուրեր (մասնավորապես պոլսահայ կյանքից) և:

Պոլսահայ միության երիտասարդաց ,Սայա կազմակերպությունը հրատարակում է ,Փունջե պարբերաթերթը, անգլերեն և հայերեն: ,Լրաքաղ, Սուրբ Հակոբ հայկական եկեղեցու հրատարակություն: Լույս է տեսնում 1958-ից, Մոնրեալում: Տպագրում է հոդվածներ կրոնի մասին և կրոնական նորություններ Մոնրեալի, Կանադայի հայ գաղութի և այլ համայնքների վերաբերյալ:

”Լուսաբաց”, պարբերաթերթ, լույս է տեսնում 1982-ից, ՄԴՀԿ պաշտոնաթերթ: “Լուսարձակ”, Մոնրեալի Հայ ավետարանական եկեղեցու եռամսյա պաշտոնաթերթ լույս է տեսնում 1981-ից: Տպագրում է գլխավորապես տեղական եւ միջազգային կրոնական, նաեւ հայկական մշակութային նորություններ: ”Հայ դատ” (The Armenian Cause), պարբերական: Կանադայի Հայ դատի հանձնախմբի պաշտոնաթերթը: Լույս է տեսնում 1984-ից, Մոնրեալում: Նպատակն է ,տեղեկացնել Կանադայի եւ հայ հասարակությանը Հայ դատի մասին, լուսաբանել, պարզել Դատին վերաբերող իրադարձությունները:

”Հորիզոն”, հասարակական-քաղաքական, մշակութային շաբաթաթերթ: ՀՀԴ Կանադայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1979-ից, Մոնրեալում՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն: Գլխավոր խմբագիր՝ Վահագն Գարագաշեան: Անդրադառնում է սփյուռքի եւ, ընդհանրապես, հայությանը հուզող հարցերին, հրատապ ու բազմաբնույթ տեղեկություններ հաղորդում հայ համայնքների մասին, մշտապես ուշադրության կենտրոնում պահում Հայաստանն ու Արցախը: Ունի գրական հավելված: ”Նոր այգ”, ՀԲԸՄ պաշտոնական ամսաթերթ-տեղեկատու, լույս է տեսնում 1978-ից, Մոնրեալում: Տպագրում է հոդվածներ ու տեղեկություններ հայ մշակույթի եւ գրականության մասին: ,Նոր սերունդե, ամսաթերթ, լույս է տեսնում 1955-ից, Տորոնտոյում, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն: Հրատարակում է Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցու վարչությունը: ,Թորոնթոհայ, պարբերաթերթ:



## **1,500,000 ARMENIANS STARVE**

September 5, 1915

Relief, Committee Asks Aid for Victims of Turkish Decrees

The American Armenian Relief Fund Committee has received two letters from Constantinople describing the horrors to which the Armenian Christians in Turkey are being subjected. One letter, dated June 15, says in part:

"The Turkish Government is executing today the plan of scattering the Armenians of the Armenian provinces, profiting from the troubles of the European powers and from the acquiescence of Germany and Austria."

"These people are being removed without any of their goods and chattels, and to places where the climate is totally unsuited to them. They are left without shelter, without food, and without clothing, depending only upon the morsels of bread which the Government will throw before them, a Government which is unable even to feed its own troops."

"It is impossible to read or to hear, without shedding tears, even the meager details of these deportations. Most of the families have traveled on foot, old men and children have died on the way, young women in childbirth have been left on mountain passes, and at least ten deaths a day are recorded among them even in their place of exile victims of hunger and sickness. It has not been possible as yet to forward any help to Sultanieh, owing to the interdiction of the Government, in spite of the efforts of the [Ամերիգան Ամբասսադոր](#), whose philanthropic and generous endeavors in aid of the Armenians are gratefully acknowledged."

The second letter, dated July 12 says:

"The condition of the Armenians is extremely aggravated since my last letter. It is not the Armenian population of Cilicia only which has been deported wholesale and exiled to the deserts. Armenian communities from all the provinces of Armenia, from Erzerum, Trebizond, Sivas, Harput, Bitlis, Van, and Diarbekir, also from Samsun, Caesarea and Urfa - a population of 1,500,000 are marching today, the stick of forced pilgrimage in hand, toward the Mesopotamian wilderness, to live among Arabian and Kurdish savage tribes. Very few of them will be able to reach the spots designated for their exile, and those who do will perish from starvation, if no immediate relief reaches them."

"It is in the name of a starving population of 1,500,000 that urgent appeals should be made to the charitable public of America."

The Armenian Relief Fund Committee believes that unless immediate aid is forthcoming future efforts will be unavailing. The Treasurers of the committee are Brown Brothers Co. 59 Wall Street.